դարձեալ պահանջէին, և ազահութիւն Դատաւորին էր անտանելի, որոց շահեալ զմիտս լուեցուցին։ և Թէոդորոս Պատրիարք գանկատանօք գրէ զսոցանէ 'ի նամակի իւրում առ զլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս։ Բայց Քաղաքապետն յետս դարձոյց զվարդեւս նորին, եդեալ 'ի մտի չարիս հասուցանել Հայոց, որպէս պարծանօք խօսէր 'ի ժողովս 'ի գրգիռ ատելութեան Յունաց։ Իսկ միաբանք և ուխտաւորք նոցին, յայտնապէս զինեալ ընդդէմ Հայոց՝ անդադար անարգէին զնոսա անպատշաճ բանիւք, եւ թէ՝ երկամեայ ժամանակս միայն ունիք առնել ըստ կամաց ձերոց։ Եւ յայսպիսի նախատանաց դադարեցան Հայ ժողովուրդք գնալ 'ի Ս. Աստուածածին, թէպէտեւ Հայ կղերք յորդորէին զնոսա, լինիլ զգաստ և մի կալ հակառակ չարին։ Եւ 'ի տօնի անարատ յղութեան Ս. Կուսին երկարեցաւ պատարագն Յունաց՝ մինչեւ ճանճրանալ Հայոց արտաքս, և իբրեւ իջին յեկեղեցին՝ կին ոմն անզգամ ձայն երարձ եւ սկսաւ անպատեհ բանիւք նախատել զազգն, մինչև յե՞րբ ոչ դադարիք ասէ 'ի դալայսր, զի 'ի մերձ ժամանակիս ունիմք արտաքսել զձեզ աստի. եւ ժայթքէր անպատկառ զայլ խօսս, եւ յասել ոմանց 'ի նոցանէ թէ պարտ է գանել զՀայս և խայտառակել. Զմիւռնացի ուխտաւորք ծանօթ լեզուի նոցա՝ ասեն, ո՞րպէս կարէք դանել. 'ի գրգռիլ եւ 'ի բազմանալ բանից, պատրաստեցան հարկանել զիրեարս, մի ոմն յուխտաւորացն Հայոց, ասէ՝ 'ի բաց թողէք զկինն, զի խրատեալ է, եւ նոցա առեալ գնացին։ Ի նմին աւուր Քաղաքապետն կոչեալ զԹարգմանն Հայոց, տայ պատմել կնոջն զեղեալսն 'ի Ս. Աստուածածին՝ թէ ոմն 'ի վարդապետացն Հայոց եհար զիս բռնցի. եհարց Քաղաքապետն, թէ ճանաչե՞ս զայրն՝ որ եհար ըզքեզ, և նա ասէ՝ երկայնահասակ եւ նորամորուս, և այր կնոջն ընդ նմա վկայէր. ցասուցեալ Քաղաքապետին իբր յանցաւոր գտեալ զՀայս, յանդիմանէ զԹարգմանն, իբր անպատեհ կրօնաւորական կարգի առնել զայդպիսի իրս, և ստիպէ 'ի վազիւ տանել առ նա զվարդապետն զի եթէ ծանեաւ ասէ՝ կինն և հաստատեաց 'ի վերայ նորա, յայնժամ ..... և եթէ ոչ՝ զկինն անզգամ պատժեցից, և երանի թէ մեր վարդապետն լինէր ըստ նշան տալոյ կնոջ.